

Պ Ա Յ Յ Օ Ն Ա Կ Ա Ն Բ

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յ 9 սեպտ. ընդ Համարաւ 367 յանուն Առաջնորդին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով ընդարձակէ նմա զիրաւունս բանալոյ ի Թովուշ գեղջ նամշաղնոյ գաւառի զմիդասեան եկեղեցական ծխական ուսումնարան:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի նոյն թիւ ընդ Համարաւ 368 յանուն Նորին, որով ընդարձակէ նմա զիրաւունս բանալոյ ի Դիլիջան գեղջ զմիդասեան օրիորդական եկեղեց. ծխական ուսումնարան:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի նոյն թիւ ընդ Համարաւ 339 յանուն Նորին, որով ընդարձակէ նմա զիրաւունս բանալոյ յուռուտ և ի Գիւլագարակ գիւղօրայս Լօռուոյ գաւառի, Սևքար և յուզունթալայ գիւղօրայս Ղազախու գաւառի և ի գաւթի Ս. Աստուածածին եկեղեցւոյ նորաշէն թաղի Գանձակ քաղաքի զմի մի եկեղեց. ծխական ուսումնարան:

Կոնդակ Վեհ. Հայրապետի ազգիս ի նոյն թիւ ընդ Համարաւ 371 յանուն Նորին, որով թոյլատրէ նմա բանալ վերստին յերկուց ամաց Հետէ փակեալ զմիդասեան ուսումնարանն տղայոց Դսեղ գեղջ Լօռուայ գաւառի:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 13 սեպտ. ընդ Համարաւ 381 յանուն Առաջնորդին Հայոց Արցախոյ որով թոյլատրէ նմա բանալ ի Հատրութ գեղջ զմիդասեան եկեղեց. ծխական օրիորդական ուսումնարան:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 14 սեպտ. ընդ Համարաւ 383 յանուն Հոգաբարձուաց Թեմական ղպրոցին Հայոց Երևանայ, որով Հաստատէ զընտրեալ ուսուցիչն ի նոցունց յիշեալ թեմ. ղպրոցի:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յ8 հոկտ. ընդ համարաւ 415 յանուն յաջորդին Նախիջևանի, որով հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան վասն միդասեան եկեղ. ծխական դպրոցաց տղայոց Փաշալու և Մարտիրոս գիւղօրէից զբարեկրօն Ստեփաննոս քահանայն Տէր Ստեփաննոսեանց, զերեցփոխան եկեղեցւոյն և Մարտիրոսեցի յարգելի Միմէօն Արզումանեանց, իսկ անձնափոխանորդ վերջնոյս զՓաշալուեցի պատուելի Ստեփանն Գոչարեանց:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յ8 հոկ. ընդ համարաւ 415 յանուն Յաջորդին Նախիջևանի, որով հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան վասն եկեղ. ծխական միդասեան ուսումնարանին Մալիշկա գեղջ՝ զբարեկրօն Խաչատուր քահանայն Տէր Առաքելեանց, զերեցփոխանն եկեղեցւոյն և զպատուելի Յակովբն Բախանեան. իսկ անձնափոխանորդ վերջնոյս՝ զյարգելի Յակովբն Արզումանեան:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի նոյն թիւ ի նոյն համար յանուն Նորին, որով հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան վասն եկեղ. ծխական տղայոց ուսումնարանի ՇիմաՀմուդ գեղջ զբարեկրօն Մկրտիչ աւագ քահանայն Իսահակեանց, զերեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և զպատուելի Բաղալն Յակովբեան. իսկ անձնափոխանորդ վերջնոյս զյարգելի Վարդանն Գէորգեան:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յ8 հոկտեմ. ընդ համարաւ 416 յանուն Թեմ. տեսչի եկեղ. ծխական ուսումնարանաց վիճակին Հայոց Երևանայ, որով թոյլատրէ նմա բանալ ի Բաշ - Գառնի գեղջ զմիդասեան եկ. ծխական ուսումնարան տղայոց:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 14 հոկտ. ընդ համարաւ 428 յանուն Առաջնորդին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան եկեղ. ծխական երկսեռ ուսումնարանաց Հայոց Բաթում քաղաքի զբարեկրօն Կոստանդին քահանայն Տէր Ստեփաննոսեանց, զերեցփոխանն եկեղեցւոյ տե-

դւոյն և զպատուելի Սմբատն Ղազարոսեան Կարինեանց- իսկ անձ-
նափոխանորդ վերջնոյս զյարգելի Յովակիմն Գասպարեան Մել-
քոնեանց:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ի 14 հոկտ-
բեր Համարաւ 429 առ բարեպաշտօն ժողովրդականս Մեծ - Սալա
գեղջ Նորոյն Նախիջևանի ընդ որում ըստ խնդրանաց նոցա նուիրէ
եկեղեցւոյն յիշեալ գեղջ զմասն ի խնկելի նշխարաց սրբոյն Թա
դէոսի Առաքելոյն:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 25 հոկտ. ընդ Համա-
րաւ 445 յանուն Առաջնորդին Հայոց Արցախոյ որով թոյլատրէ
նմա բանալ ի Բուլուճա գեղջ Խաչէն դաւառի զմիդասեան եկեղ-
ծխական ուսումնարան տղայոց:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 25 հոկտ. ընդ Համա-
րաւ 446 յանուն նորընտիր Հոգաբարձուաց եկեղ. ծխական միդա-
սեան ուսումնարանի տղայոց Ս. Նշան եկեղեցւոյ Հայոց Եղուարդ
գեղջ, որով Հաստատէ զնոսա ի պաշտօն Հոգաբարձութեան յիշեալ
ուսումնարանի:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 25 հոկտ. ընդ Համա-
րաւ 449 յանուն Առաջնորդին Հայոց Արցախոյ, որով Հաստատէ ի
պաշտօն Հոգաբարձութեան եկեղ. ծխական Ս. Գեորգեան ուսում-
նարանի Հայոց Խանքեանդի աւանի զբարեկրօն Պետրոս քահանայն
Տէր Յովհաննէսեանց, զբերեցիոսանն եկեղեցւոյ տեղւոյն և զպա-
տուելի Յարութիւնն Եղուբեանց, իսկ անձնափոխանորդ վերջնոյս
զԳրիգոր Բէգն Գալանթարեանց:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ի 27 հոկ-
տեմբերի ընդ Համարաւ 450 յանուն ժողովրդականաց Հայոց վի-
ճակաց Նոր - Զուղայու և Հնդկաստանի որով Հաստատէ ի պաշտօն
Առաջնորդութեան այնոցիկ վիճակաց զնորապսակ Եսայի Եպիսկո-
պոսն Աստուածատրեանց:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յ9 նոյեմբ. ընդ Համարօք 463 և 474 յանուն ժողովրդականաց վիճակաց Հայոց Ատրպատականի, Պարսկաստանի և Հնդկաստանի, որովք յորդորէ առատանալ ի նուիրատուութիւն ի նպաստ բարձման պարտուց վանացն սրբոց Յակովբեանց որ յերուսաղէմ, զորս Հանգանակելոց է միաբան յեշեալ վանից բարեշ. Գաբրիէլ ծայրագոյն վարդապետն Անոյշեան:

Կոնդակ Վեհ. Հայրապետի ազգիս յ9 նոյեմբ. ընդ Համարաւ 466 յանուն Առաջնորդին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով Հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան եկեղ. ծխական միդասեան տղայոց ուսումնարանի Հայոց Թովուզ գեղջ Շամշադնոյ գաւառի զբարեկրօն Մովսէս քահանայն Տէր Անանեանց, զերեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և զյարգելի Եփրեմ բէգն Մուրատեանց, իսկ անձնաւիժանորդ վերջնոյս զպատուելի Արզումանն Վարդանեանց:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 16 նոյեմբ. ընդ Համարաւ 480 յանուն Առաջնորդին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով ընդարձակէ նմա զիրաւունս վերածելոյ զմիդասեան եկեղեց. ծխական օրիորդական ուսումնարան Հայոց Գուլթալիս քաղաքի յերկդասեան:

ՔԱՂՈՒԱՄՔ 80ՐԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՍԻՆՈԴԻ.

25 յունիսի. Ներսիսեան Հոգեւոր դպրանոցի որդեգիր — աշակերտ Զօհրաբ Աբրեանցը, այս տարուայ փետրուարի 29-ին, դասատան մէջ անարգել է ուսուցիչ պ. Միսաք Ասիլեանցին, Հարկանելով նրան, որի պատճառով և իսպառ արձակուել է դպրանոցից, ըստ խնդրանաց Հոգաբարձութեան Ներսիսեան դպրանոցի և կարգադրութեամբ Սինոդիս զրկուում է «-ն Կաթի ժամանակով ազգային և եկեղեցական պաշտօններ վարելու իրաւունքից: